

Պերլինի Եւ Արցախի Պատերը

Գրեց ԳՈՒՏՑԻ Պ. ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Եթէ կարգ մը երկիրներու մէջ անջատումի պատերը տեսանելի են, ինչպէս որ է Պերլինի պողպատէ եւ կրածոյէ միաձոյլ հսկայական պատը, այլ տեղեր ալ անտեսանելի են, բայց եւ անյայտ աշխարհի սահմակեցուցիչ, որչափ այդ ցանկապատներն ու պատերը՝ որոնք կը բեւեռեն ձեւականօրէն մարդկային քաղաքական թէ կրօնական ըմբռնումները:

Հարաւային եւ հիւսիսային Քորէան, Վիէթնամը՝ չունին զիրար անջատող պատեր. սակայն կան քաղաքական սահմանները բնորոշող գիծեր, որոնք պատմական մէկ պահուն քաշուած են քաղաքական մարմիններու կողմէ՝ որպէս վահան ինքնապաշտպանութեան:

Այս անջատումներուն բեւեռներուն մէջ քանի մը տասնամեակէ աւելի կը գտնուին երկու քաղաքական-տնտեսական հակամարտութիւն՝ դրամատիրական եւ համայնավարական կարգերը:

Իսկ ինչ տեսակ պատ մը կ'անջատէ Արցախը իր մայր հողէն՝ Հայաստանէն: Բզբտուած մարմնի մը միջեւ կ'երկարի 15 քիլոմետրոց հող մը որ տեսանելի պատ մըն է, գետնին հաւասար, առնուած մայր հողէն՝ Հայաստանէն, եւ ձրիաբար տրուած դրացի Ատրպէյճանին, դիւանագիտական գեհնային օրէնքներով:

Երբ այլեւայլ երկիրներու մէջ անջատումները պատահած են քաղաքա-

կան թէ դաւանանքային նկատառումներու գործադրութեամբ՝ բարելաւելու ժողովուրդներու հասարակական կեանքը իրենց իսկ ըմբռնողութեամբ, Հայաստանին հողերը, անջատուած եւ յանձնուած են դրացի երկիրներուն՝ համայնավարական կարգի մէջ, երբ հաւասարութիւնն ու արդարութիւնը օրուան օրակարգին էին, միւրձեւով երկիրը տնտեսական այնպիսի վիճակի, որ յաւիտենապէս կախեալ ըլլայ շուրջիներէն, ապա կեդրոնական կառավարութեանէն:

Այս վերջին 70 տարիներու ընթացքին՝ Արցախի կղզիացած ժողովուրդը ոչ միայն չէր կրնար օգտուիլ տնտեսապէս բարելաւուելու միջոցներէն, ալ աւելին՝ հոգեպէս ալ կ'ընկճուէր իր գլխուն վերեւ ճօճուած թուրէն՝ թուրքին դարաւոր մարդկային հոգին ու միտքը ընկճեցնող միջոցէն:

Ազատ ժողովուրդի մը նիւթական թէ բարոյական (մշակութային) արտադրողականութիւնը անպայմանօրէն կը պահանջէ նպաստաւոր պայմաններ: Երկրին արդիականացած գիտաշխատողները, արտածուած եւ ներածուած հում նիւթերը, անկաշկանդ երթեւեկը դրացի երկիրներուն հետ, արդիականացած երթուղիները, արտածելու եւ ներածելու գիտական միջոցները, դրացիական լաւ յարաբերութիւնները, ազատ «մտածելու» եւ «գործելու» իրաւունքները,

Անցեալ ամիս, Նոյեմբերին, Մոսկուայի մօտ Ամերիկեան դեսպան ձեռք Մեքլոք Հայաստան այցելած էր եւ տեսակցած՝ հայրենի դեկավարներուն հետ: Դեսպանը այցելած էր նաեւ Ս. Էջմիածին եւ ընդունուած Ամեռայն Հայոց Կաթիկոսին կողմէ, ու ապա՝ գացած էր Ծիծեռնակաբերդ ծաղիկներ դնելու Ապրիլեան գոհերու յուշարձանին:



Սուրէն Յարութիւնեան եւ Միացեալ Նահանգներու Դեսպան Շէք Մեքլոք

դրամատուներու եւ դրամանիշներու արդիականացումը, մեծ դեր ունին տեղւոյն բազմակողմանի զարգացման հետ:

Երբ այսօր ժողովուրդները ձայն կրնան բարձրացնել անարդարութիւններու դէմ, ի սփիւռս աշխարհի, հետեւանք կը թուի ըլլալ ոչ քաղաքական թէ տնտեսական տեսակէտներու թուլացման, այլ ատոնց իսկ անգործադրելի ըլլալուն իսկ պատճառաւ:

Ժամանակները անշուշտ փոխուած են: Ժամանակները միշտ կը փոխուին: Մարդիկ կը յեղաշրջուին: Գիտութիւնը, հնարքները, եւ այլ եւ այլ իմացութիւններ կը դնեն մարդ արարածը դէմ յանդիման նոր պա-

հանջներու եւ ասպարէզներու դէմ: Ինթագիտակցութիւնը անպայմանօրէն ծնունդ պիտի առնէր ոչ միայն Սովետական Միութեան մէջ, այլ նաեւ Արեւելեան Եւրոպայի մէջ, ուր ժողովուրդները սորված էին հպատակելու անվիճելու օրէնքներու, եւ արտադրողական միջոցներու:

Այս ենթագիտակցութիւնը ազստրեւ դարձաւ Արեւելեան Գերմանիոյ մէջ, ուր ժողովուրդը ոչ միայն կը տառապէր Երկրորդ Համաշխարհային Պատերազմին պարտուողականութեան ստորակայութեանէն, այլ նաեւ կը տեսնէր տարբերութիւնը տնտեսական թէ քաղաքական

(Շար.ը տեսնել ի ծրոյէջ)

ՊԵՐԼԻՆԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՊԱՏԵՐԸ

(Ծար. 7րդ էջէն)

իրավիճակին՝ երկու Գերմանիաներուն միջեւ: Չափանիշները անհամեմատական էին: Անշուշտ փաստերը չեն խաբեր մեզ ներկայ գիտական միջոցներով: Իսկ այս բոլորով հանդերձ ալ, Գերմանիաները անջատող պատը միշտ իրենց դէմն էր, միշտ խորհրդանիշը պարտուողականութեան, ստրկութեան:

Գերման ժողովուրդը ինչպէս պարտադրեց այդ պատուարին՝ պարտուողականութեան պատին խորտակումը:

Փաստ, տարիներու ընթացքին երկու Գերմանիաներուն աշխատանքները դէպի նիւթական թէ բարոյական բարելաւում: Ժամանակակից վիճակագրական փաստերը համաշխարհային իրողութիւններ են: Այլեւս գաղտնիք ըսուածը գոյութիւն չունի: Քսաներորդ դարու այս աւարտին, ոչ միայն վիճակագրական տուեալները կը փաստեն արտադրողականութեան մակարդակը, այլ նաեւ համաշխարհային ընտանիքներու կարգին ալ ցոյց կուտան այդ երկրին կրթական, ուսման մակարդակը:

Այս օր, Միացեալ Նահանգներու մէջ լաւատեղեակ ենք (յաճախ մամուլի միջոցաւ յայտնուած) թէ որչափով ուսանողները իրենց կրթական մակարդակով ցած կը մնան բաղադրարար Գերմանիոյ եւ Ճարոնի ուսանողներէն, նոյնպէս, սապէս կոչուած «երրորդ կարգի» երկիրներու աշակերտներէն:

Վերջին եօթանասուն տարիներուն ընթացքին՝ երբ Սովետական Միութիւնը իր «դասագիրքերէն» կը կարգար թէ ինչպէս իր արտադրողականութիւնը պիտի բարելաւէր եւ անցնէր արեւմտեան երկիրներուն չափանիշները, անդին Արեւմտեան Գերմանիա իր 60,000.000 ժողովուրդով, գիտական բարձրորակ միջոցներով, հնարամտութեամբ եւ ճարտարութեամբ կը բարձրացնէր ժողո-

վուրդին տնտեսական մակարդակը:

Երբ Գերմանիոյ արտադրողական ուժը հետզհետէ կը զօրանար, զուգահեռական կերպով ալ թափ կ'անէր իր դիւանագիտական դիրքը միջազգային ամպիոնին վրայ: Անպայմանօրէն քաղաքական եւ դիւանագիտական դիրքը՝ որպէս հրամայականը ունի նախ՝ երկրին ամուր, կայուն նիւթական կառոյցը:

Երկու Գերմանիաներուն մերձեցումը կը կայանայ միայն՝ նախապայման ունենալով մէկուն հօր դիրքը, այլ եւ այլ յիշուած նախադրեալներու կարգին: Կը հետեւինք ներկայիս իրադարձութիւններուն, որոնք իրենց արագընթացութեամբ մեզ կը դնեն շփոթ վիճակի մը մէջ:

Իսկ Արցախի եւ Հայաստանի ժողովուրդը ինչ իրավիճակի մէջ կը գտնուի, նկատի ունենալով որ երկուքն ալ կը գտնուին Սովետական Միութենէն ներս:

Արցախն ու Հայաստանը տարբեր սահմանադրական օրէնքներով կապուած են Սովետական Միութեան: Որպէս հանրապետութիւն, Հայաստանին տնտեսական արտադրողականութիւնը այդչափ ողբալի է, որչափ միւս հանրապետու-

թիւններունը: Իսկ երկրաշարժին բերած աղէտն ալ տարբեր հարց:

Ներքին ճակատէն, հայ ժողովուրդը աշխատելու է սահմանադրական օրէնքները բարեկարգելու, ի նպաստ իւրաքանչիւր հանրապետութեան: Այդ օրէնքները որ կը ստրկացնեն իւրաքանչիւր «չրջան» վերցուելու են, տեղի տալով բնակիչներուն քուէարկելու ազատութեան:

Սակայն, կարելորագոյնը՝ ներքին թէ արտաքին ճակատի վրայ, հայերը համագործակցելու են՝ դնելու Հայաստանի արտադրողական վիճակը ամուր հիմերու վրայ: Զօրաւոր նիւթական չափանիշներուն է որ կը յաջորդէ քաղաքական թէ դիւանագի-

տական պարտադրողականութիւնը: Հրամայական է հիմնել նոր գիտաշխանոցներ, համալսարաններէ ներս նոր մասնաճիւղեր տնտեսագիտութեան, արտածումի եւ ներածումի համար նոր գրասենեակներ արդիական սարքաւորումներով, կարենալ հետեւելու եւ գործակցելու արեւմտեան երկիրներու պաշտօնեաներու հետ:

Արտադրողականութիւնն ալ անհմաստ կը դառնայ առանց պատշաճ առաքման միջոցներու եւ շուկայի: Հետեւաբար երթուղիներու կանոնաւորութիւնը եւ կայունութիւնը հրամայականն է ելք եւ մուտքին մէջ:

Կան քաղաքական բարդու-

թիւններ հայուն համար, բայց եւ այնպէս՝ միջոցներ: Ո՛չ մէկ օրէնք յաւիտենական է: Մարդուն յեղաշրջման հետ ալ պիտի հետեւողականօրէն ալ փոխուին օրէնքները:

Տնտեսական կառուցման աշխատանքով, թէ արտաքին, եւ թէ ալ ներքին ճակատի վրայ, մենք՝ հայերս գործակցելու ենք յարատեւօրէն:

Մենք Գերմանիոյ թիւը չունինք: Սակայն մենք ալ ժողովուրդ ենք՝ օժտուած յարատեւելու կամքով: Մեր դէմ գտնուած ժամանակակից օրինակներէն կրնանք սորվիլ եւ վերջիվերջոյ յարմարցնել այդ ինչ որ կենսական է մեր ազգային կարիքներուն եւ պահանջներուն: